



ՍՈՒՐԲ ԾԱԿՈՒ ԱՐԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԵՐԵՅԻ

ԱՆԱՊԱԿԻՆ ԿԻՐԱԿԻ
17 ՄԱՐՏ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐԲԷՆ
(54.11-55.13)

Տէրը այսպէս կ'ըսէ.
«Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն
զարնուած անմխիթար տառապեալ, հաշ-
տուծիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխի-
թարուիս. ահա ես քու հիմերդ շափիւղայ
քարերով պիտի դնեմ, պատկերդ՝ կարկեհան
քարերով, աշտարակներդ կարմիր յակինթ-
ներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիւրեղէ,
եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր
եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ
Աստուծմէ ուսած պիտի ըլլան, զաւակներդ
մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ
դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս:
Ա՛լ բռնութեան վախը պիտի չունենաս,
արհաւիրքը քեզի պիտի չմօտենայ: Քեզի
եկողները պիտի ըլլան միայն անոնք՝ որոնք
ինձմով դարձի կու գան. իրենց երկիրները
ձգելով պիտի գան քու կողքիդ բնակին, քեզ
իրենց ապաստանը դարձնելով: Ահա ես
ինքս քեզ հաստատեցի. դարբինը իր փքոցով
կրակը կ'արծարծէ եւ կը շինէ գործիքներ՝
որոնք գործածութեամբ կը մաշին ու կը
փճանան. սակայն ես քեզ հաստատեցի որ
միշտ մնաս: Որեւէ զէնք պիտի չյաջողի
քեզի վնասել, որեւէ լեզու որ կը փորձէ
քեզ դատապարտել՝ պարտութեան պիտի
մատնես, եւ քեզ ամբաստանողները իրենք
պիտի դատապարտուին: Տիրոջ ծառայող-
ներուն ժառանգութիւնը ա՛յս է. ե՛ս է որ
զանոնք կ'արդարացնեմ,՝ կ'ըսէ Տէրը: Դուք

որ ծարաւի էք՝ ջուրին եկէք, եւ դուք որ
դրամ չունիք՝ եկէք գինի ու կաթ առէք
առանց դրամի, առանց գին վճարելու: Ինչո՞ւ
ձեր վաստակը կու տաք այնպիսի բաներու
որոնք չեն կշտացներ: Ինծի մտիկ ըրէք եւ
բարիք պիտի վայելէք, բարիքներով պիտի
կշտանաք: Ականջ տուէք խօսքերուս եւ
պատուէրներուս հետեւեցէք: Եթէ մտիկ ընէք
ինծի, բարիքներու մէջ պիտի ապրիք, ձեզի
հետ յաւիտեանական ուխտ մը պիտի կնքեմ,
եւ ձեզի պիտի տամ այն խսկական օրհ-
նութիւնը զոր Դաւիթի խոստացայ: Ես զինք
հեթանոսներուն վկայ եւ ազգերուն իշխան
ու հրամանատար կարգեցի: Քեզ չգիտցող
ազգեր քեզի պիտի դիմեն, քեզ չճանչցող ժո-
ղովուրդներ քեզի պիտի ապաւինին քու Տէր
Աստուծոյդ՝ Իսրայէլի Սուրբին համար, որ
քեզ փառաւորեց»:

Փնտռեցէք Տէրը, որքան ատեն որ կրնաք
զինք գտնել. կանչեցէք զայն, որքան ատեն
որ կրնաք զինք գտնել. կանչեցէք զայն,
որքան ատեն որ մօտիկ է: Ամբարիշտը
իր չար ճամբաներէն եւ անօրէնը իր չար
խորհուրդներէն թող հրաժարի եւ Տիրոջ
դառնայ, եւ Տէրը պիտի ողորմի անոր. թող
մեր Աստուծոյն դառնայ, որ կը ներէ նոյնիսկ
եթէ բազմապատիկ ըլլան ձեր մեղքերը:
«Որովհետեւ, իմ խորհուրդներս ձեր խոր-
հուրդներուն պէս չեն, իմ ճամբաներս ձեր
ճամբաներուն չեն նմանիր,՝ կ'ըսէ Տէրը: Այլ,
որքան երկիրքը երկրէն բարձր է՝ այնքան
բարձր են իմ ճամբաներս ձեր ճամբաներէն,
եւ իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդներէն:
Ինչպէս անձրեւն ու ձիւնը երկիրքէն կ'իջնեն
եւ երկիրք չեն բարձրանար կրկին մինչեւ
երկիրը չոռոգեն, զայն չարգասաւորեն ու
չպղտորեն, եւ սերմանողին սերմ եւ ուտելիք

հաց չտան, այնպէս ալ իմ բերնէս ելած խօսքը ապարդիւն ինծի պիտի չգառնայ, մինչեւ իմ կամքս կատարէ եւ նպատակներս յաջողցընէ: Այո, ուրախութեամբ դուրս պիտի գաք ձեր գերութենէն եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք. լեռներն ու բլուրները պիտի խայտան եւ ցնծութեամբ ընդունին ձեզ, եւ դաշտի բոլոր ծառերը իրենց ճիւղերով ծափ պիտի զարնեն: Յրգենիին տեղ նոճի եւ դժնիկին փոխարէն մրտենի պիտի բուսնի. եւ ասիկա Տիրոջ անունին համար անջնջելի, յաւիտենական նշան մը պիտի ըլլայ»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԵՆ
(6.1-7.1)**

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծոյ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուծոյ կ'ըսէ.

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»: Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա է փրկութեան օրը:

Ոեւէբանով պատճառմի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խռովարարներու յարձակումները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք մաքուր սիրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ զօրութեամբ եւ արդարութեամբ գինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ ալլալիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ճանչնալ. մենք գիտենք թէ մեզ լա՛ւ կը ճանչնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք գիտենք թէ կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ

համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք ուրիշներու կեանքերը կը ճոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչի՛նչ ունինք, մինչ ամէն ինչ ունինք:

Ահա, սիրելի՛ Կորնթացիներ, ամէն ինչ բաց եւ անկեղծ սիրտով ըսի ձեզի: Դուք ինչո՞ւ կը դժուարանաք արտայայտուելու: Ո՛չ իմ պատճառովս հարկաւ, այլ պարզապէս՝ ձեր սէրը ինծի արտայայտելու կը քաշուիք: Բայց կ'ողբեմ որ ինծի պէս բանաք ձեր սիրտերը եւ ազատօրէն խօսիք դուք ալ. չէ՞ որ իմ զաւակներս էք դուք:

Բնա՛ւ, անհաւատներուն գործակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալ լոյսին եւ խաւարին միջեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ սատանային միջեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհնաներուն միջեւ:

Արդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուծոյ ինք ըսաւ.

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուծոյ պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա՛ թէ ինչո՞ւ Աստուծոյ կը հրահանգէ մեզի.

«Անջատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,՝ կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

**ՅԵՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(15.1-32)**

Մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կու գային՝ զինք լսելու համար: Փարիսեցիներն ու օրէնքի ուսուցիչները սկսան

տրտնջալ, ըսելով. «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ»:

Յիսուս հետեւեալ առակները պատմեց անոնց.-

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր ինսուռինը արօտավայրին մէջ եւ չ'երթա՞ր կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Եւ երբ գտնէ, ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. “Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ”: Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան ինսուռինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին»:

«Կամ ենթադրենք թէ կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, ճրագը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'ա՞ւլեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. “Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ”: Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ»:

Ապա շարունակեց.-

«Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. “Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի”: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

«Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը ղրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը

լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. “Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.- Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ քու գործաւորներէդ մէկը”: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. “Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու”: Հայրը իր ծառաներուն հրամայեց. “Անմիջապէս բերէք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ”: Եւ սկսան խրախճանքի:

«Մինչ այդ, երէց զաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. “Եղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց”: Երէց զաւակը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ ան պատասխանեց. “Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար”: Հայրը ըսաւ. “Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ”»:

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻԱՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԼՍԱՐԱՆ 2019

Հսկումի Ժամերգություններ ամեն Չորեքշաբթի երեկոյեան 7.00-ին
(20 Մարտ, եւ 3, 10 Ապրիլ)
Բացառաբար՝ ՄԻՋԻՆՔԸ. Հինգշաբթի, 28 Մարտի երեկոյեան 7.00-ին

Արեւագալի Ժամերգություններ
Ամեն Ուրբաթ առաւօտեան 10.00-ին
(22, 29 Մարտ, եւ 5, 12 Ապրիլ)

ԼՍԱՐԱՆ՝

յետ Հսկումի Ժամերգություններուն

3

Չորեքշաբթի, 20 Մարտին՝

"Հօր Գրկաբաց Ընդառաջումը դէպի Անառակ Որդին"

կը խօսի Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Գիադայեան

4

Չորեքշաբթի, 3 Ապրիլին՝

"Յարատեւ Աղօթքի Միրտը"

կը խօսի Բրշ. Կարօ Սրկ. Նոխուսեան

5

Չորեքշաբթի, 10 Ապրիլին՝

"Պատրա՛ստ Ես Ինքնաքննութեան"

կը խօսի Առաջնորդ սրբազան հայրը՝

Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոս

ԵԿԵՂԵՅԻՅԻ ՆԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՐԱՅ ԶԵՐ ՀԱՆԳՈՒԹԵԱԼ
ՀԱՐԱՉԱՏՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՅՈՒԹԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿԱՊՈՒԵԹԷՔ ԴԻԲՆԱՏՈՒՄ՝ **514 331 5445 x202**